ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
«ՎԵԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
Փ Բ Ը

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ
«ВЕДУ БЖШКАКАН КЕНТРОН»
З А О

0601 Ք. Վեդի Գայի 2/30
Г. Веди
հեռ. (0234) 2-33-64

N 97
"_20_" __03__ 2025թ.

«Կվանտա» ՍՊԸ-ի տնորեն
Կառլեն Բաղդասարյանին

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Բաղդասարյան,

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Կվանտա» ՍՊԸ-ի միջև 14.01.2025թ. կնքվել է ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/05-3 ծածկագրով բժշկական պարագաների և բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագիր:

Հիմք ընդունելով «Կվանտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը /կցվում է/, որի համաձայն Մատակարարի կողմից անհնարին է դարձել վերոնշյալ պայամանգրի շրջանակներում 5-րդ չափաբաժնի մատակարարումը, ինչպես նաև Մատակարարի պատրաստակամությունը վճարելու պայմանագրի որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովումները՝ «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն մասնակի լուծում է ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/05-3 ծածկագրով պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության *"Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը..."*

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 10 /տաս/ բանկային օրվա ընթացքում «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի 220129690370000 հաշվեհամարին վճարել ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/05-3 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովման՝ 54000 /հիսունչորս հազար/ ՀՀ դրամ, պայմանագրի կատարման ապահովման՝ 36000 /երեսունվեց հազար/ ՀՀ դրամ գումարները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարեու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «Կվանտա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«Վեդու Բժշկական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն՝ **Ա. Գրիգորյան**

Կատ. Գնումների համակարգող՝ Լուսինե Բաղիյան
Հեռ. +(374)91-777-037